

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 18

3 ՄԱՅԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառաւել զրե. եւ գաւառներուն համար յիսուն զրե., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը տնօրէնութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ տարածակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած չեն, իսկոյն իմացնեն տնօրէնութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկանքը չ'ընկառողութեան չեն առնուիր:

Ձեռնարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ժանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռնագիր ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در عیاده غلطه (ماسیس) غرضی اداره می

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԺԻՒՐԱԿԱՆ ԱՆՏԻ ԳԻՄ ՆԱԽԱԶԳՈՒԶՈՒԹԻՈՒՆ

Ծիրական արտի գէժ՝ նախազգուշութեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմինը միշտ
չենսական զօրութեամբ պահել որնոր զրուծեան կենսական զօրութիւնը, առողջութիւնը
և դիմացողան այժ տարով կրնայ բլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ "ուտելիք-դեղ" է. որ շուտմը
առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր
հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և
բարակցաւի առաջին նշանները երևան կ'ըլլեն. ինչպէս տեսողա-
կան դուռնաութիւնը, թէթեւ սակայն թելաթար հազ, գիշերները
սաստկացող բարեխառնութիւնը և անորժակի կորուստ ևն.
Ժամանակ վատնելու չէ, մէկէն Ըսգոթի Բաղադրութիւնը
առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և
զօրութեան վերականգնել և այս եղելութիւնը զորձնականա-
պէս կը տեսնուի վասնզի հազարաւորներ տեսած են և կը տեսնեն:

ԸՍԳՕԹԻ ԲԱԼԱՆՍԻՐՈՒԹԻՈՒՆ

կատարելապէս անուշահամ է, անորժակը կենդանացունէ, և
մարտոցութիւնը կ'աճապարէ: Հիւանդութեան սերմը կը
մեղցրնէ և շուտմը մարմինը կը զաւարէ: Ըսգոթի Բաղադրու-
թիւնը ընդմիշտ այս տեսնուած նշանով վարդադոյն փաթեթի
մը մէջ կը գտնուի:

Չեղերու վրայ ասոր ուշա-
գրութիւնը ընել պէտք է:

Բարբ Բեռլինցերը և Բեռլինցերը ին ծախեն:

21

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ զա-
ւազաններ եւայլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Ծու-
կան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթական վճարում, կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին
10 զեղչով եւ կ'առնուին իսկ ապառիկ գը-
նողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻՒՆ

Կրսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ
ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ
մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդ-
պէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍՍ-
ԳՈՒԼԵԱՆԻ Չինանտանէն, Հնդկաստանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն,
համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ա-
մառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Դափու,
Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ
նոյնպէս եգիպտոս:



Յ. ՎԱՍԻԼԵԱՆԻ չորս տետրալիներու մէջ ամբողջութեամբ Գրավարժութեան նոր դրութիւնը
հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ դրամաճառացի:—Դին հաալին 20 փարայ:

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 18

3 ՄԱՅԻՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթը (հաճագրական) Տ . Ա . — Էջ մը յիշատակներէս . ԳՐԻԶԱՆԹԷՄ : — Ամառուամ պատ-
ասուքիւնները (Ֆանթեզի) ԳԼԱՆԿ : — Անդարձ սեր (Բանաստեղծութիւն) Ս . Գ : — Ինչպէ՞ս
կը գրեմ . ՓԱՅԼԱԿ : — Պատկերներ գաւառի կեանքէն . Այրիմ . ՇԱՀԱՐԻԿ : — Ուրուագիծներ —
Վայրկենական . Դր . Մալխաս . ԳԱՄԵՐ : — Այցելութեան մը տպաւորութիւնը :

ՇԱԲԱԹ

Մայր եկեղեցիի Թաղ . Խորհուրդը տա-
ծարին դրան վրայ արձանագրեց՝ զայն վե-
րաշինող բարերարին անունը, ամէն յարգանք
ընծայելով Մանուկ էֆ . Սմբատեանի :

Ֆէրիգիւղի Թաղ . Խորհուրդը, ինքն ալ
իր յարգանքը ընծայելու համար իր եկեղեցին
վերաշինող բարերարին . . . մինչեւ կղզի փախ-
ցուց Զինորը սէյ Մէրհամէթեանը :

Հակադրութիւնը (contraste) այնքան աչ-
քի կը դարնէ, որ կ'արժէ՝ չարաթական անց-
քերու շարքին մէջ՝ ուշադրութենէ չլրի-
պեցնել զայն :

Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն, բոլոր թա-
ղերուն մատակարարական, դպրոցական, քա-
հանայական խնդիրները կը կարգադրուին .
բայց Ֆէրիգիւղինը չի լինար : Աստի մը այս
մնաշնորհը Պալատիկներուն կը սլաղանէր .
Ֆէրիգիւղիները մրցանակը խնդրին անոնցմէ :
Եկեղեցիներն վիշելու վտանգի մէջ էր . Պատ-
րարքարանը արտօնեց որ նուիրահաւաքու-
թեան մը ձեռնարկէն . հանգանակութիւնը
կատարուեցաւ, բայց գումարին մէկ մասը
մէջտեղ չէլաւ : Ի զուր Տնտեսական Խոր-
հուրդը «կեդրոնական համարակալ»-ին քննու-
թեան յանձնեց խնդիրը . Պանք Օթոմանէն
contrôleure մըն ալ եթէ երթար, նորէն չպի-
տի կրնար մէջէն ելլել :

Այս միջոցին էր որ, անհատ մը ներկայա-

ցաւ ինքնաբերաբար, ու յանձն առաւ իր
ծախքով և իր հսկողութեան ներքեւ վերա-
շինել եկեղեցին : Ինքը թէ՛ դրամատէր էր
և թէ՛ ճարտարապետ : Ֆէրիգիւղիները հըր-
ճուեցան ու ժամանակաւոր հաշտութիւն մը
դուրացաւ մէջերնին . . . մինչեւ եկեղեցիին ծծ-
ման օրը : Յաջորդ առաւուն, վէճերը կը վերած-
կէին թաղակոյններուն ու տէրտէրներուն մի-
ջեւ . և Զինորը սէյ, որ սահ մը հաւատացած
էր թէ՛ իր քանի մը հարկեր ոսկիի դոնողու-
թիւնը իրաւունք սլաղ տար իրեն՝ Թաղականի
ատենապետութիւնը վարելու, մատակարա-
րական դործն ալ կարգի կանոնի դնելու հա-
մար, — ինչ որ իր միակ փափագն էր, — ո՛չ
միայն Ֆէրիգիւղէն՝ այլ Բերայէն ալ հեռա-
ցաւ, յուսախաբ, զգուած, քէն ըրած :

Ասով հանդերձ, բաղդաւոր թաղ մըն է
Ֆէրիգիւղ, և այս բոլոր եղածներուն հա-
կառակ՝ բարեպաշտ Տիկին մըն ալ սպտորաս-
տակամութիւն յայտնէր է դպրոցը՝ վերաշի-
նել՝ 300 ոսկի ծախսելով : Ապահովապէս,
այդ Տիկինն ալ շունչը Մաքրիգիւղ կամ Այս
սթէֆանոս սլաղի առնէ, վերանորոգելիք
դպրոցին բացումէն քսանըորս ժամ ետքը :

Ֆէրիգիւղիները, այս պայմաններուն
մէջ, քիչ մը կը նմանին այն միսող, անա-
ռակ տղոց որոնք՝ հակառակ իրենց բոլոր ը-
րածին՝ հօրենական քսակը միշտ բաց կը

գտնեն առջեւնին: Բաղդաւորութեան խնդիր, պարզապէս:

Բայց կերեւայ թէ այս բաղդաւորութիւնսն իր վերջաւոյսին մօտեցած է, վասն զի օրաթերթերուն մէջ հրատարակուած լուրի մը նայելով «Ս. Պատրիարք Հայրը՝ Ֆէրիդիւղի թաղային դործերուն անկերպարան վիճակին վերջ մը տալու համար՝ մտադրութիւն ունի այդ թաղը միացնել Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին»: Երանի՜ թէ ճիշդ ըլլար այս մտադրութիւնը և իրականանար:

* *

Մասիսի՝ նախորդ թիւը տպագրուելու վրայ էր արդէն, երբ հեռագիրը գուժեց Գաբրիէլ վրդ. Անոյեանի մահը:

Տխուր տպաւորութիւն մը թողուց այս անակնկալ մահը, նոյն իսկ անո՛նց վրայ որոնք հաշտ աչքով չէին դիտած երուսաղեմի լուսարարապետի ընտրութեան արդիւնքը, և աւելի՜ համբաւաւոր եկեղեցական մը կողմէն: Եւ ճիշդ անոր համար որ Գաբրիէլ վարդապետ քիչ մը շատ դատարկեցաւ՝ շատ կը մեղքցուի: Ստամբուլի քաղցկեղէ կը տանջուի եղբոր արդէն, երբ ճամբայ ելեր է Պաղատաէն: Երուսաղէմ հասնելուն՝ կէս—հիւանդ կէս—աւուղջ՝ իսկոյն դործի ձեռնարկեց, վանքին դանձատան բանալիները ստանալով Պատրիարք Սրբազանին ձեռքէն, կրօնային աւանդական արարողութեաւ իր մը որ Գլխադրի խորանին առջեւ կը կատարուի, և տալու որիչ, պատկառելի բան մը ունի իր մէջ՝ Ս. Փաղաքին յատուկ ամէն հանդիսաւորութեանց պէս: Հոս՝ լրագրութիւնը և հոն՝ միաբանութիւնը հետաքրքիր էին իմանալու, տեսնելու թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէ նորընտիր լուսարարապետը՝ այդ ընթացքը «հաշտարար» եղաւ, իր ջերմ կուսակիցներուն իսկյուսախաբութիւն պատճառելու աստիճան: Եւ իր այդ ընթացքովը ցոյց տուաւ թէ ինքը պէտք եղածին պէս չէր ճանչցուած: Միաբանական վէճերը նոր փակուած կարգադրուած և վանքը իր սովորական վիճակը գտած, Գաբրիէլ վարդապետին համար ճախող քայլ մը առնել պիտի ըլլար՝ զանոնք

արծարծելը. երկար տարիներէ ի վեր Երուսաղեմէն հեռացած այդ միաբանը, առջի վայրկեանէն, նշմարեց անշուշտ թէ իրերը այնպէս չէին ինչպէս ոմանք ներկայացնել փորձած էին իրեն և հանրութեան: Ինքը ուխտ մը ունէր՝ վանքին անձնուէր մնալու, և այդ ուխտը ու անձնուիրութեան զգացումը ուրիշ բան չէին թելադրեր իրեն՝ բայց եթէ պէտքարդ Պատրիարքին հովանաւորութեան ներքեւ աշխատիլ միաբանութեան օգտին, առանց ազդուելու կուսակցական ներշնչումներէ:

Մահը ատեն չի թողուց որ լուսարարապետը դործնականապէս ցոյց տար իր այս բարի տրամադրութիւնը:

* *

Պոլսահայ լրագրութեան համար՝ Գաբրիէլ վարդապետին մահը, թաղային խնդիրներ՝ ինչպէս է Ֆէրիդիւղիը, դպրոցի և եկեղեցիի լուրեր, նոյն իսկ բարեգործական արածագանդներ, որոնք անսպասելի չաթթու մէջ ալ, համեմատապէս երկրորդական կարեւորութիւն մը ունեցան Սիւէն հասած հեռագիրներուն և թղթակցութիւններուն քով, որոնք կը հաղորդէին Ս. Միւռնի օրհնութեան կատարումը և կը նկարագրէին Կաթողիկոսական օծման հանդէսը:

Տանեկեղու հաղար ուխտաւորներու բաղմութիւն մը ներկայ գտնուել է Միւռնիօրհնէքին և նուիրական կաթնային կախարիչը բանալու բաղդը վիճակուէր է Մէրսինցի վաճառականի մը որ յիսուն ոսկի նուիրած էր այս բարեպաշտական նպատակով: Նոյնպէս Կաթողիկոսական օծման հանդէսէն ետքը, Կիլիկիոյ Ս. Հայրապետին ղլուխը ծածկող քօղքը վար առնելու կնքահայրութեան կրօնային հրճուանքը իր զաւկին վայելել տալ ուղեր է՝ Հալէպցի տիկին մը, զրամական նուէրով մը: Աւանդական հին սովորութիւնսն եր կն ասոնք, մեր Եկեղեցիին յատուկ, զորս չենք յիշեր տեսած կամ լսած ըլլալ մեր օրով, այնքան հեռաւոր թուականի մը կը վերաբերի հանդուցեալ Մկրտիչ Կաթողիկոսին օծումը: Ու ճիշդ այս պատճառով, է՛ն պղտիկ մանրամասնութիւններն իսկ, կարօտալի հետա-

քրքրութեամբ մը կարգացուեցան: Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին իր Աթոռը ժամանելէն ի վեր՝ Սխիս մայրավանքին եղած նուիրատուութեանց գումարը իր հասնի ութը հարիւր ոսկիի, նուիրուած կարգադրեալն փոխարժէքն ալ միասին հաշուելով: Այն ազգային ու լքուած վիճակին բաշխութեամբ՝ որ ունենալովու համար. բայց բաշխութեամբ այն սըրտաբոլս ու ջերմեանդ զգացու մեկուն, զորս առաջ բերին մեր համայնքին ամէն դասակարգերուն մէջ՝ Կաթողիկոսական ընտրութիւնը և օծումը, շատ համեստ գումար մըն է եւ անհամապատասխան՝ արտայայտուած համակրանքին: Ժամանակը անշուշտ պիտի լրացնէ այս թերին, և Կիլիկիոյ վանքերուն, եկեղեցիներուն, դպրոցներուն ճշխարհման ու զարգացմանը համար ցոյց տրուած եռանդը դրականապէս ալ պիտի ցոյց տրուի: Հիմայ, որ աւարտեցան Օծման և Միւսուսի տնային հանգէսները, Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը Կ. Պոլսոյ մէջ ողջունելու պատիւը պիտի ունենանք ի մօտոյ, ուր՝ ինչպէս արդէն ծանուցուեցաւ՝ պիտի գայ իր երախտագիտական ու հաւատարմական զգացմանց հաւատարմը մատուցանել յոռո Կայս. Գահոյից:

* * *

Գեղարարութեամբ հստակ մը վերջացնելու համար՝ յիշենք քանի մը հայ արուեստագէտներու յաջողութիւնները օտար ու զրգուարահած միջավայրերու մէջ: Երկու վաղածանօթ անուններ, Պ. Պ. Զաքարեան և Էտկառ Շահին, Կ'երեւան դարձեալ Բարիզի այս տարուան «Սալօն»ին ցուցադրութեանց մասնակցողներուն մէջ: Վերջինին նկարներուն վրայ խօսելով, Ֆրանսացի քննադատ մը «Ուժգին և ճիւղն տաղանդով Հայ մը» կանուանէ Պ. Շահինեանը: Ու իբրեւ նորութիւն մը, զոր օրաթերթերը հաղորդեցին, աւելցնենք թէ հայ նկարչուհի մըն ալ, Օր. Արմինէ Պապանյան—Թիֆլիզցի—իւր վրձիններ արտադրութիւնները ցուցադրեր է Բարիզի նկարահանողէսին մէջ: Անգլի, Պէրլինի մէջ,

Պ. Վարդան Մախոխեան կը գնահատուի Կիւղարուեստական միւս ցուցահանդէսը դրած իր մէկ նկարովը, որ ուշագրաւ տեղ մը կը դրաւ Պրախթի, Բամֆի, Բիւվի տը Շահինի եւ ուրիշ հուշակաւ վարպետներու դործերուն քով: Այս ցուցահանդէսը խիստ սահմանափակ թիւով նկարներ կ'ընդունի, ինչ որ աւելի՛ կը բարձրացնէ Պ. Մախոխեանի արժանիքը: Երիտասարդ արուեստագէտը, որ անցեալ տարի ալ մասնակցած էր, այս անգամ նկարած է «Զմեռնային տեսարան մը Պէրլինի շրջակայքէն» ուր բնութիւնը Կ'երեւայ իր ամէն երանգներով ու գեղեցիկութիւններով:

Տ. Ս.

ԷՋ ՍԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ՓԱՐԻՍ ՀԱՆԵՐԷ

Ոչ նորավէպ է այս, ոչ ֆանթէզի մը և ոչ ալ խօսուածութիւն: Տապանագիւր մը... Սիրուած էակի մը յիշատակը յաւերժացնելու համար դրուած սողեր, մարմարիոնի տեղ թուղթ եւ կեղծ արցունքներու փոխան աննկնդ յարգանք մը քու յիշատակիդ, ո՛վ իմ անուշիկ Փարիս հանրման, ո՛վ դու, մաքրագոյնդ ի կանայս:

Կոյս մեռար դուն և այնքան ապրեցար որքան կ'ապրին... Կաղնիները: Ութնուն տարի...:

Սիրեցինք զիրար ճշմարիտ, անխաղախ, անապակ սիրով, իրարու վրայ դուրգութեանք երեք տարի շարունակ, մէկ տանիքի տակ, մէկ թելի վրայ, քով քովի: Մէկ լամպար կը լուսաւորէր զմեզ, մէկ դաւաթէ կը խմէինք և մէկ աթոռի վրայ կը նստէինք... Երկու հատ չուսնաւաշնուս համար:

Թող տուր ուրեմն ինձի, իմ սիրական տիրուհիս, որ իմ պիղծ մատներովս մատչիմ քու կուսագեղ յիշատակիդ և այս լլկումին համար ներողութիւն հայցէ ինձի երկինքէն ուր, վախճամ, դեռ կ'ապրիս...:

Փարիս հանրմ... ո՛վ է աղ,—կը հարցը

նէք ինծի, — որուն վրայ այնքան յարգանք, այնքան երկիւղածութեամբ կը խօսիմ: Այս անունը բնաւ բան մը չըսեր ձեզի և երբեք չէք կրնար երեւակայել թէ մոռացումի անդունդէն դուրս քաշուած այդ արարածը իր պատմութիւնը ունի Նաբոլէոնին պէս կամ Կղէոպատարայի նման:

* * *

Եթէ Contemporainsներուն մէջ այդ անունը տեղ չունի՝ յանցանքը Vapereauինն է, որովհետեւ Փարիս հանրին ալ բեղմնաւոր կեանք մը ունեցած է, — բեղմնաւոր բառին անմիւլթական, պարկեշտ իմաստով — և դորժ մը կատարած է որուն նմանը ոչ ոքի տրուած էր ընել ասկէ առաջ, ինչպէս նաեւ ասկէ ետքը:

Սոդոմոն որ շատ կնատէր ըլլալուն համար իմաստուն կոչուեցաւ, Սոդոմոն անունի է որովհետեւ տաճար մը չինելէ ետքը, դուցէ անկէ ալ առաջ, կրնարու հետ կիցնար կ'ելլար պողպատէ... կամքով մը. Բոլոմ պոս նշանաւոր է որովհետեւ Ամերիկան դըտաւ, Բանպոն բաւ մը արտաանմած ըլլալուն համար որ ապահովապէս foin coupé չէր բուրեր. Հիւսթիսները՝ իրենց... փափկանրկատուններուն համար. Նինոն տը Լանքլէօ՝ որովհետեւ ո'չ սիրուելէ կը յագնէր և ո'չ սիրելէ կը յագնար, ինչպէս նաեւ Լիան տը Բուժի տէրը ըլլալուն համար անկողնի մը որ հազար ֆրանք կ'արժէ... Ժամը:

Փարիս հանրմը ասոնցմէ վար չէր մնար: Ան ալ իր կարգին բան մը ըրած էր որուն արձագանգը պէտք է խնամով պահուած մնայ չնաչխարհիկ մարդոց պատմութեան մէջ:

Փարիս հանրմը, Օրթագեղի տանտիրուհի, խախմաճի իսկէնտէր աղային քոյրը, Բուլանթի տուտունի դրացին, որ Գուրգէնին ծնիլը տեսած է և ձանիկ ամիրային մեռնիլը, Փարիս հանրմը որ Պէղճեան ամիրային ձեռքը պագած է և ոտքերը Գիորգ Կաթողիկոսին... որպէս զի իր եղբայրը, Իսկէնտէրը, վարդապետ չընէ, այդ Փարիս հանրմը լիթխարի, դիւցազնական, ահագին, սարսուցեցիչ, անխնայի բան մը ըրած է: Գիտէ՞ք ինչ...:

Տառներկու տարեկանէն սկսեալ մինչեւ

ութսուն տարեկան հասակը, այսինքն վաթսունըութը տարուան շրջանի մը մէջ 744,600 խօլա ջուր քաշած է հորէն, Տիտանի դորժ մը որ կրնար Կատպից ծովը չորցնել:

Հակառակ, սակայն, այսքան ջուրին՝ չով-չոր կրն մըն էր Փարիս հանրմը երբ ամուրիութիւնս դացի պարտըկել իր տանը մէջ, իբրեւ pensionnaire, երեք տարի շարունակ:

Ուրկէ՞ ուր հոն ինկած էի. ամբողջ պատմութիւն մըն է այս դոր մանրամասնօրէն չի կրնալ պատմելուս համար անշուշտ պատճառներ ունենալու եմ:

Cherchez la femme! այս առածը իր ճշմարտութենէն բան մը չի կորսնցներ, որովհետեւ տիրացուներու բերնէն ալ դուրս կուգայ:

Թողու Բերան, իր ճոխ արարթմանները, վարձու կահաւորուած սենեակները — ուր ստեղծ տանտիրուհին մոռցնել կուտայ ամուրիութիւնը — և ինչալ Օրթագեղ տան մը մէջ որու վրայէն աղքատութիւն, խեղճութիւն կը կայլակէր, փողոցի մը մէջ ուր ոչինչ կար յանձնարարելի, այսպիսի դրացիներու քթին տակը սրոնց բարեւ տալու կը քաշուի մարդ: այս ամէն պղտիկութիւնները, տեղեղութիւնները յանձն առած էի որովհետեւ բարեկամուհի մը այսպէս ուղած էր. et lorsque femme veut!...

Տարբեր կերպով չէի կրնար շարժիլ, ուստի անձնուրաց համակերպութեամբ մը թէեւ մտայ այդ տունէն ներս, բայց, աւանդ, երբ երեք տարի ետքը հարկ եղաւ ինծի դուրս ելլել անկէ, արցունք մը կար աչքիս մէջ և ցաւ մը սրտիս խորը: Մօրենական տանիքէ բաժնուելու պէս դառն եղաւ մեկնումս և հակառակ անկէ ի վեր այնքան տարիներ անցնելուն, միշտ, նոյն իսկ այսօր, այս պահուս, երախտագէտ թափով մը զգացումներս կ'ողողեն հոգիս երբ միտքս կուգայ այդ շարժուն մոմիան, Փարիս հանրմը, որ իր ամէն առաքինութիւններէն զատ, անհաւատալի քաջութիւնը ունեցած է ութսուն տարի շարունակ անմիթար պահպանելու իր նարնջենոյ ծագիկը՝ հակառակ ամէն փոր-

ծութիւններու, ամէն մարմնական մոլորութեաներու:

Եւ գեղին մէջ կ'ըսէին թէ տանտիրուհիս բաւական գեղեցիկ եղած էր... Սէվաստօօօրի պատերազմէն առաջ:

Անշուշտ երկնից Prix Montyonին արժանացնելու համար չէ որ réclamer կ'ընեմ այսօր Փարիս հանրմի այն առաքինութեան՝ զոր երկու անգամ քառուսն տարիներու երկայն շրջանի մը մէջ անձեռնմխելի կրցած է պահել:

Երբ ճանչցայ ղինքը, ժամանակը իր աւելի գերը կատարած էր արդէն: Գլխուն վերայ մազ չէր մնացած ո՛չ ալ բերնին մէջ ակուայ:

Չոր ու վտիտ մարմին մը որ երկար ատեն անտուկի մը տակը մոռցուած ձերմակեղէնի գոյնը առած էր, մզլուած խաւարի գոյն աչքեր, և բերան մը որ կարծես մաշած էր շատ խօսելէ. աւասիկ inventaire իր ֆիզիքականին:

Բայց ասոր հետ մէկտեղ թեթեւոգի, ոստոստուն, զուարթաբան և խելքը գլուխը:

Իր կեանքը նպատակ մը ունեցած էր: Մաքրութիւնը մարմնական թէ տնային, իր խոտալն էր, idée fixe, պաշտամունքը:

Պիտի դարմանաք եթէ ձեզի ըսեմ թէ, Փարիս հանրմը ամենէն շատ լուացուած կինը եղած է Հայերուն: Սադի մը պէս կը սիրէր ջուրը և լողանքը՝ բարիգեան de haute volée քօքօթի մը նման:

Լուր օրերը առտուն կանուխ պանեօ մը կ'առնէր, ձմեռը գաղջ և ամառը պաղ, սանկ թեթեւ պանեօ մը, bain de siège մը թերեւս—տեսնելու հետաքրքրութիւնը չեմ ունեցած—և շաբաթ, կէս օրէն ետքը, անպատճառ մեծ հանդիսաւոր բաղնիք մը որու միջոյն կէս խալիպ օճառ կը սպառէր. իր ամենէն մեծ ծախսն էր այս:

Շատ աղուոր հոտող կիներ ճանչցած եմ ես, բայց Փարիսի պէս հատ մը չեմ տեսած որ բնաւ բան մը չի հոտի:

Սննդութեան աստիճան հասնող իր մաքրասիրութիւնը մարմնէն անմիջապէս ետքը

կը տարածուէր տանը մէջ գտնուող կենդանի և անշունչ էակներու վրայ անխտիր. կը լուար ամէն օր, խոհանոցը, բակը, սանդուղները, հաւերը, կատուն, կը սրբէր աթոռները—ըսելու եղանակ մըն է այս—ամբողջ տնական ամանները, կը շիէր դռներու պղնձէ ցնցուղիները, կը մաքրէր ապակիները, դարակները, պահարանները և տանը բոլոր ծակը ծուկը: Եւ ասիկայ, Աստուծոյ օրը, ութսուն տարի շարունակ:

Հիմայ որ մեռած է, այլեւս կրնամ ըսել: Փարիս հանրմը երեք չորս անգամ տաք ջուրով լուացած է ղիս և անգամ մըն ալ խօսքով... տունէն գիշեր մը բացակայ գտնուելուս առաջին անգամը:

Աստուած ողորմի՛ հոգուն, ղիս մօր պէս կը սիրէր, անկէց ալ աւելի: Թէեւ կարասիներու և զարդարանքի տեսակէտով շատ խեղճուկ ըլլար ննջատենեակս, բայց հոն անբող մաքրութիւնը Ռօշիլտները չեն ունեցած իրենց ապարանքներուն մէջ:

Իր մաքրասիրութեան աստիճանը նկարագրելու համար՝ Մասիսին 16 էջերը քիչ պիտի գային, ուստի մէկ օրինակով ներեցէք որ բաւականանամ:

Փարիս հանրմը այնքան մաքրասէր, այնքան մաքրասէր էր որ ազոտոս բառ մը արտասանելուն պէս՝ կերթար անմիջապէս բերանը կը ցօղուէր, ա՛լ երեւակայեցէք:

Այդ ոչխարի, տատրակի, սագի սիւպար կինը տկարութիւն մը ունէր միայն, տարիքի խօսք ընելու չէր հետը: Կրակ կը կտրէր, կարիճ, վիշապ:

Յիսուներեք տարեկանէն վեր չէր ելլեր, խարխիս նետած էր հոն: Ութսուն տարի ապրելէ ետքը, յիսուներեք տարու մեռաւ: Բայց documentներ ունէր քովը հաստատող թէ ինքը ծնած էր Նաբօլէօնի եգիպտոս երթալու թուականին, աչքովը տեսած էր Մընացականին ծնունդը և քիւքիւննի Տիգրանին ատաջին ակուայ հանելը:

Այս մանրմասնութիւններուն որքան վաւերական ըլլալը Օրթագեղցիները թող ըսեն ձեզի:

Իմ ալ դըօսանքս էր տարիքի խօսք ընել շարունակ իրեն հետ:

—Քա Փարիս, Պօղոս Պատրիարքը տեսած ես:

—Սանկ հեյալ մեյալ միտքս կուգայ, Ազգային հետ օր մը ժամ կացեր էինք տէ, մեզի ցուցոցին: Զօճուխներ էինք, ի՞նչ միտքս մնայ:

Եւ ըսել թէ Պօղոս Պատրիարքը շատ շատ 40 տարուան ինդիր մըն է:

Դիշեր մը Աւետիս Պատուելիին մէկ գիրքը կը կարգայի կոր, ժամանակագրութիւն մը կամ ասոր մօտ բան մը: Կերեւայ թէ 1838ին Օրթագեղի մէջ սեւ Մարիամ անուն հայ կին մը իր երկու աղջիկ զաւակները հորը նետած խեղդած է եղեր, զոնէ այսպէս կ'ըսէր Աւետիս Պատուելին:

—Քա՛ Փարիս, վախքին սե Մարիամ մը կայ եղեր քի երկու աղջիկները հորը նետեր է նէ, միտքդ է:

—Քա վույ, ի՞նչ կործանում օր էր քի, աչքովս տեսայ, Ազգային հետ ետեմախնիս դրինք սեյիւրի դացինք նէ:

—Էյ, քանի տարի կ'ըլլայ կոր:

—Էյ, սանկ քսան տարի մը կայ:

—Հիմայ պոնեցի իճեհ. քա, ատ պանը ասկէ քամամ 61 տարի առաջ եղած է, դուն ալ ան ատենը հիշ սեյիլ իսէ, 18 տարու չի՞ կայիր, ետեմախ կը հագնիս եղեր:

—Ատ Աւետիս օլաճախը՞ կրեր է:

—Հա՛ ես.

—Ան իմին... հայսէ չըսեմ, աղբարիս զըք էր սե, մախսուս կրած է:

Մէկ կերպով չի կրցայ հասկցնել թէ ժամանակագրութիւնները սուտ չեն ըսեր—թէ եւ ես այդ հաւատքը չունիմ— և թէ Աւետիս Պատուելին շատ իրադեկ արձանագրողը եղած է իր ժամանակի անյգերուն:

—Ան իմին... կ'ըսէր ու կերթար չիսի չիտակ բերանը ցօղուելու:

Իր կեանքին պէս մաքուր մահ մըն ալ ունեցած է Փարիս հանրմ.— կաթուածը:

Գրեթէ դար մը ապրելով՝ հանդերձ, ոչ ինչ ազոտած էր իր մարմինէն և հոգիէն: Սուրբի մահով մեռաւ ան, մէկ ձեռքը խղճին վրայ և միւսը հորին չուանին:

Ինձմէ զսոտ ոչ ոք լացաւ ետեւէն: Այս

անցաւոր աշխարհին մէջ երկու բան կը թողու Փարիս հանրմ: Անաղարտ անուն մը և մէկ ոսկիի պահանջ մը ինձմէ:

Վերջին ամսականս՝ վերջին յիշատակս եղաւ իրեն:

ԴԻՐԶԱՆԹԷՍ

ԱՄԱՌՈՒԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Ծ Ա Ն Թ Է Ջ Ի)

Պ. Ղուկաս Լօփիկեան, ձեռք բերեցիք սակ շաւ մը ծրարներով,՝ ետագիւղ՝ իր բերեցաւ կը մսնէ: Բեռնակիր տղայ մըն ալ ծաղիկ քաղարներ կը բերէ:

—Ահաւասիկ, աղուորիկս, ամառուան պէտքերնիս մէկիկ մէկիկ ճարեցի. պաղպաղակի մեքենայ մը, որպէսզի ամառը տաքէն նեղացած ատեննիս տեսուրմա ուտելով պաղըշարկինք. Մուհանիրի կտաւէ երկուքուս համար գիշերնոցցու—ամառը զով կը բռնէ եղեր: Տուի մը միջատասպան փոշի (Կը սկսի արտասանել)

Երբ մեր տեղն րլայ սեմեակ քե վրան Շաւ մը միջատներ մեր ներսն ու վրան Ման գալով, մեր միսն ուտել կարտուն:

—Հասկցար, աղուորի՛կս:

Արդ ռեկլսմ չէ այս, հապա աւետիս Անոնց բեռնամին գնուած է գարգիս:

—Ան մուկներու թշնամի ըսածը այս ըսքանչելի փոշին է, որ գիշերները մշիկ մշիկ քնանալնիս պիտի ապահովէ: (Կը տարուցակեց ցուցնել առարկաները) Պարտէզին համար Սալը Բազարէն ծաղիկներ առի...: Իրիկունները այս ծաղիկներուն դիմացը էրիկ կնիկ քովէ քով նստած ճնկելու համար օղիի նոր չի՞ մը՝ երկու աղուոր գաւաթներով. էրկանդ համար նոր նարկիկի մը. քեղի համար ալ ճաշանական հովահար մը՝ որպէս զի ցորեկները շատ տաքնաս նէ գործածես:

Տիկին Ագնիւ (Շաւ դժգոհ)—Ի՞նչ. այս տարի ամառանոց պիտի չերթանք:

Ղուկաս—Ձե՛, հոգիս, Բերայի մէջ ամառնային զուարճութիւն կը պակսի:

Ագնիւ (Բարկացած) — Արդէն ինծի ի՞նչ բան վայելել տուած ես որ օգտօխոթեան ալ տանիս. հինգ տարիէ ի վեր 98ին առած գլխարկովս եմ: Հապա ա՛մառուան շրջագլէստս. կրանուհի մարապետը մեռած առեկնը երեք տարուան էր:

Ղուկաս — Հոգի՛ս, իրիկունները նեղանանք նէ, սանկ մինչեւ խարաղած կերկընանք... դառածովն դռնանալու ենք:

Ագնիւ — Ես ալ այս տարի սանկ Զուրերը, Բաղար-Պաշի, Ֆըրըլտախ աղուոր քե՛մ մը պիտի ընենք կ'ըսէի կոր, սիրտս կտորեցաւ: (Մէկ կողմ կը փառուի սրդողած)

Ղուկաս (Բարկացած) — Տանը ամառուան պէտքերը հոգացինք, մեղք չգործեցինք ես՝

Ագնիւ (Լայով) — Աշխարհ արարած ամառանոց կերթայ կոր. քովի Մարտիրոս աղայենք, դիմացի քերիէ Եօրկին, ետեւի տան պուլիցան: Մինակ դո՛ւն ինծի չես տանիր կոր:

Ղուկաս — Չեմ կրնար, բարա չունիմ, կնի՛կ, հասկցա՛ր:

Ագնիւ — Չե՞ս կրնար մի: Սուտ է: Չիս ուզեր կոր. ինձմէ ձանձրացար. արդէն ինծի չէիր սիրեր որ...

Ղուկաս — Մեղա՛յ ըսէ:

Ագնիւ — Մեռնիլս կուզես որ ուրի՛շ կնիկ մը առնես:

Ղուկաս — Ի՞նչ խօսք է. աչքդ սիրեմ...

Ագնիւ — Դիտեմ, գիտեմ, խելքդ միտքդ Սիմօնեանենց Սուրբիկին է: Ինծի տեսաւ էդ առաջ ալ անիկա առնելու համար մեջերսիդ խօսք կայ եղեր...

Ղուկաս — Պարապ խօսք մի՛ ըներ... ուզէի նէ չէ՞ր կրնար առնել:

Ագնիւ — Ձիս սիրելուդ չաւիր եմ: Մինչեւ որ հայրս նաւամատոյցին գլխետունը վրադ չդարձուց նէ՛ չպատկուեցար:

Ղուկաս — Բու աղէկութեանդ համար էր, հոգիս, հայրդ վերջէն չպիտի տար, հասկցա՛ր...

Ագնիւ (Միտ լայով) — Ինծի հոս տաքէն պիտի հայեցնել տաս: Թոքա՛խտ ընել կուզես կոր:

Ղուկաս — Բեզ ա՛մէն կիրակի պտըտիլ կը տանիմ. ուրբաթ օր մըն ալ տղմա, ճելվա կը չինենք Սարը-Եարի ջուրերը կ'երթանք:

Ագնիւ — Չեմ ուզեր, օր առաջ մեռնիմ աէ աղատիմ. ա՛ռ այս պաղպաղակի տուիր (Պարսեղը կը նետէ) ես պաղպաղակ չեմ ուզեր. սրտիս կրակը թո՛ղ երկտասարդութիւնը լափէ:

Ղուկաս (Անհոգ) — Դու՛ն գիտես. ես ու ուզեմ նէ ցորեկները չուկան ալ կրնամ տո՛ւնս տուա՛ն ուտել:

Ագնիւ (Աւելի բարկացած) — Ա՛ռ քու ծաղիկներդ, սի՛րտ ունիմ ծաղիկներու նայելու... (թաղարները կը կոտէ):

Ղուկաս — Դու գիտնալու բանդ է. ես արդէն ծաղիկ սիրող չեմ:

Ագնիւ — Առած գիշերնոցներդ ալ չպիտի կարեմ, չեմ ուզեր:

Ղուկաս — Առանց գիշերնոցի կը պառկինք. աւելի հանգիստ կ'ըլլայ:

Ագնիւ (Բարկութեան վերջին աստիճանին հասած) — Վա՛յ, աստ՞նկ է մի. առ սա օղիի չի՛ն ալ (պատահաճեմ կը նետէ): Դինետունին վարձքը օղիով պիտի լմնցնես... ես տաքէն տապկուած ատենս, դու՛ն ի՞նչու դիմացս քե՛մ պիտի ընես եղեր:

Ղուկաս — Աղնի՛ւ. ըրածդ գիտե՛ս կոր մի... համբերութիւնս ա՛լ պիտի հատնի:

Ագնիւ — Իմինս արդէն հատաւ: Ա՛ռ սա մարկիլեդ ա՛լ (կը նետէ) ես քեմպէիի հօտ չեմ կրնար տանիլ. սիրտս կը խառնուի:

Ղուկաս (Շատ բարկացած, բարձր ձայնով) — Աս ըրածդ չեղաւ: Էրիկ մարդու մը մարկիլեն անոր պատիւը ըսել է: Չափը անցուցիր:

Ագնիւ (Նմանապէս) — Հապա կնկան Ֆիստանը. ա՛ն ի՞նչ ըսել է. ինծի հինգ տարիէ ի վեր հին Ֆիստանով պտըտցուցիր տէ, բան չըսի. լեզու չունեցող կնիկը գտեր էս ես՝, հետը ուղածիդ պէս կը խաղայիր կոր: Ինծի նայէ՛, Ղուկա՛ս աղա, ան օրերը անցան. ա՛լ իմ աչքերս բացուեցան. աղէկ հասկցայ որ միտքդ դիս ողջ ողջ թաղել է...

Ղուկաս (Ձայնը իջեցնելով) — Ես ճանձ մը անգամ չեմ կրնար թաղել. ես խղճմտանք ունիմ...

Ագնիւ (Աւելցնով, մօտ գիւտ մը բրածի պէս) — Աս սա միջատասպան փոշիդ ալ (պատահաճեմ դուրս կը քափէ) թո՛ղ քահրապիթիները երկուքնիս ալ ուտեն հատցնեն տէ, հասկնաս:

Ղուկաս (Յուսահատ) — Թահրապիթի-

ները... (զարհուրած) օղի չկայ. նաեկիկ չկայ... մէջ մըն ալ մինչեւ առտու քանքա-
պիքքինէրը. (որոշուամով) հասկցայ, ապրիլէն ա-
սանկ սկսար նէ, ձեռքէդ ազատում չկայ,
եկուր Պէյխօզը բաւական տեսիր տէ, տուն
մը բռնենք:

Ազնիւ (Յաղթական, երկանք քովը կուգայ)
եհնի—Մահալլէն կուղեմ, հոգի'ս, Միւսիւ
Յակոբիկը ըսաւ որ իրենք Եհնի—Մահալլէ տուն
բռնենք են, անիկա չաքաթը երկու—երեք օր
չուկայ չերթար, Չուբըրը պիտի տանի մեզի:
Ի'նչ աղուոր ժամանակ պիտի անցունենք:

Ղուկաս—Միւսիւ Յակոբիկը ըսաւ... չա-
քաթը երկու օր չուկայ չերթար...

(Խորին մտածումի մը մեջ կը մտաւորէ)

Գ.Ա.Ն.Ի.Կ.

ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՐԵՍ

ՏԻՆԻՆ ԶՍՊԷԼ ԵՍՍՍՅԵՍԵԼԻՆ

Իրապէս այսպիսի հարցում մը չէք ըրած
դուք, բայց քանի որ Ձեր յայտնած մէկ փա-
փաքին պատասխանելու փութկոտութիւնը
ունեցան արդէն մէկ քանի հոգիներ, ուղեցի
որ ես ալ գրեմ:

Եւ քանի որ ձեզի կ'ուղղեմ դրութիւնս,
ազնիւ Տիկին, թող տուէք որ նիւթէն պըղ-
տիկ չեղում մը ընեմ իմ անկեղծ եւ ջերմ
գնահատումս յայտնելու համար Ձեզի՝ Ձեր
Խաբող նայուածքը եւ Գնչուհին խորադրերով
երկու դրուածքներուն համար, որոնք Ձեզի
պատիւ բերելու չափ յաջող ու գեղեցիկ էին
իմ կարծիքովս—եթէ երբեք կարեւորութիւն
մը կը կարծէք որ ունենայ ան:—

Հիմա ըսեմ թէ ինչպէ'ս կը գրեմ:

Ընդհանրապէս ա'յն ատեն միայն գրիչը
ձեռք կ'առնեմ, երբ ա'լ չեմ կրնար չգրե'լ,
այսինքն գրելը ոչ թէ միայն հաճոյք մը, այլ
նաեւ պէտք մը կ'ըլլայ ինծի համար, պէտք
մը որուն գոհացում պէտք է սալ անպատ-
ճառ: Հետեւաբար կը գուշակէք թէ նիւթ
մը ուղեղիս մէջ բաւականատէն կը ծփծփայ,
կ'ան չբաղաւորայ—թէ եւ տարտամօրէն—գեւ
թուղթին չանցած: Պտուղներու հասունանալուն

կը նմանի ասիկա. երբեմն դոյնալէն յետոյ
հով մը կու գայ ծառէն վար կը նետէ դայն
եւ երբեմն ալ ծառին վրայ մնալով կը հա-
սունայ:

Վերնագրէն կը սկսիմ գրելու, եւ շատ
քիչ կը պատահի որ ո եւ է մէկ դրուածքիս
վերնագրերը փոխեմ ետքէն: Սկսած ատենս
չեմ գիտեր թէ ինչպէ'ս պիտի վերջացնեմ,
բայց միշտ կը ջանամ աղուոր կարծած մէկ
կտորս վերջաւորութեան վերապահել:

Կը նախընտրեմ գիշերը գրել, որովհետեւ
ցերեկին միտքս այնչափ ամբիով չեմ գտներ՝
որքան գիշերը: Կ'ուզեմ որ սենեակը ստուերի
մէջ ըլլայ եւ լուսամտիովը—աղէկ մը իջած—
միայն դրասեղանս լուսաւորէ: Առանձնու-
թիւնը անհրաժեշտ չէ գրելու համար, կրնամ
գրած ատենս խօսակցիլ, առանց ըսելիքներս
մոռնալու:

Ո եւ է յօդուած գրելու համար նօթիկ
չեմ առներ առաջութեւն, մտքիս մէջէն կ'ընեմ
դասաւորումը: Շատ հազուադէպ է որ ո եւ է
գրուածք մէկ անգամէն աւելի գրած ըլլամ,
ծող եմ այդ մասին, ընդօրինակելէ կը խոր-
շիմ. եթէ տեսնեմ որ նորէն գրել անհրա-
ժեշտ է, կը պատուեմ կը նետեմ եւ քանի մը
օր ետքը դարձեալ կը գրեմ՝ իրր թէ առաջ
ընաւ գրած չըլլայի:

Երբ սկսիմ գրել, կուղեմ վերջացնել մէկ
շունչով, եթէ կարելի ըլլայ: Այդ պահուն
եթէ ընդմիջում—ինչ որ շատ քիչ կը պա-
տահի—կը բարկանամ:

Հազուադէպ չէ որ գրելու զբաղած ա-
տենս արշալոյսը ծագիլ սկսած ըլլայ եւ ես
չդգամ ժամանակին այնքան յառաջացած ը-
լալը:

Եթէ առաջութեւն մտքիս մէջէն ըրած դա-
սաւորումէս մէկը խուսափի մտքէս, կը զգամ
ատիկա գրած պահուս, ու պատահած է որ
ժամերով անշարժ խորհած եմ ատիկա գրելու
համար:

Գրուածք մը սկսած ատենս չեմ կրնար
ընաւ գուշակիլ թէ որքա'ն պիտի ըլլայ եր-
կարութիւնը. երբ տեսնեմ որ բոլոր ըսելիք-
ներս ըսած եմ, յօդուածս կը ստորագրեմ:

Միշտ կը նախընտրեմ իմ սենեակս եւ իմ

սեղանիս վրայ գրել և քիչ մը տարօրինակ բան—հայելի մը կուզեմ որ ըլլայ գրասեղանիս վրայ ուր ինքզինքս տեսնեմ՝ երբ աչքերս վեր առնեմ թուղթին վրայէն :

Կուզեմ որ ամէն բան կանոնաւոր ըլլած չուրջս, սենեակս շտկուած, գրքերս կարգաւորուած, ծծուն, կաղամար եւն. ամէն բան իր սովորական տեղը :

Նրբ սկսիմ գրել, ա՛լ շատ չեմ մտածեր—գրեթէ բնա՛ւ. գրած ատենս յաջորդը կու գայ ինքնիրեն :

Նրբ շատ յուզուած ըլլամ՝ չեմ կրնար գրել, կը սկսիմ, բայց թուղթը սլաղ և գըրիչը դանդաղ կու գայ և կը պատռեմ կը նետեմ. սպասելու եմ որ քիչ մը հանգստանամ :

Իմ կարողութեանս ներածին չափ յաջողագոյն գրուածքներս անոնք են՝ զորս գրելու պահուս կը յոգնիմ և լիննալէն ետքը տեսակ մը ուժաթափութիւն կը տիրէ վրաս :

Ո և է բան տեղւոյն վրայ չեմ կրնար նկարագրել, եթէ նոյն իսկ ուզեմ. տեսարանը միտքս կը մնայ եւ յետոյ, նոյն իսկ շատ ետքը, կրնամ գրի առնել դայն, էն պղտիկ մանրամասնութիւններով իսկ :

Այնքան հապճեպով կը գրեմ որ, ընդհանրապէս գիրքեր կը մոռնամ բաւերու մէջէն :

Négligé վիճակի մէջ ո և է բան չեմ կրնար գրել, պէտք է որ օրուան արդուղարդովս նստիմ գրասեղանիս առջեւ :

Չեմ ուզեր որ ձեռագրիս վրայ ամենապղտիկ փոփոխութիւն մը իսկ եղած ըլլայ խմբագրութեան կողմէ :

Նրբ բան մը ունենամ մտքիս մէջ՝ կը փախաքիմ օր առաջ գրի առնել դայն, բայց անգամ մը գրելէ յետոյ չեմ աճապարեր դայն մամուլին յանձնելու համար, որովհետեւ գիտեմ թէ օրին մէկը պիտի ըլլայ վերջապէս ասիկա :

Ինքզինքիս համար լաններ կը գրեմ և ասիկա հաճոյք մըն է ինծի :

Այն օրերը ուր շատ բան կարգացած եմ, որամագիւր չեմ ըլլար գրելու :

Նեղ ու երկայնիկ կտրուած թուղթեր ունիմ, որոնց վրայ կը նախընտրեմ գրել միշտ :

Ո և է մէկ գրուածքս չեմ սիրեր որ մէկը կարգայ դեռ չապուած :

Եթէ շատ ուրախ տրամադրութիւններու մէջ ըլլամ, գաղափարէ գաղափար այնքան մեծ ուսումններ կ'ընեմ որ չեմ կրնար ո և է բան գրել—բայց ի մտերմական համալններէ, որոնք ժամանակ չունին ինծի համար, ամէն ատեն կրնան գրուիլ : Գրած ատենս երբ բան մը տարտամ երեւայ՝ ինքզինքս պահ մը ընթերցողիս տեղ կը դնեմ ու կը մտածեմ թէ պիտի կրնայ հասկնալ :

Վիճակագրական հանգամանք ունեցող կանոնաւոր բաներ գրելու երբեք հակամէտ չեմ, չեմ կրնար : Տիրապետող բանը իմ մէջս՝ զգացումը եղած է և կաշկանդումի տակ չեմ մոնար շատ :

Աս ըսածիս լաւագոյնս ասպացոյցը ներկայ յօդուածս է արդէն :

ՓԱՅԼԱԿ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՔՐ. ՄԱԼԽԱՍ

Սրածայր մօրուք, վառ աչքեր, երիտասարդ դէմք՝ քիչ մը թխագոյն՝ լայնեղր գըլխարկի մը տակ սպուերարկուած. հասակը՝ աւելի բարձր քան միջակ՝ ցից եւ ուղիղ, քայլուածքը՝ խրոխտ և արագ : Սօսելու կըտրուի ձեւ մը ունի որ շատ չի տարբերիր իր քննադատականներէն : Զարմանալի է միայն որ, քննադատութեամբ իրեն անուն մը չի նող այս գրչի մարդը՝ գիւրագրգիւ կը դառնայ երբ քննադատութեան մը առջեւ դըտնուի, ճիշդ այն վերաբոյժներուն պէս որոնք ծանր գործողութիւններ կը կատարեն ուրիշներու մարմինն վրայ, բայց եթէ զիպուածով գնդասեղ մը մխուր իրենց մասին ծայրը, մարելիք կունենան : Բոլրի թարգմանիչը չի տկարացաւ, սակայն, իր անդրանիկ հատորին դէմ մղուած դրական պայքարին առջեւ ուրուն կուրծք տուաւ յամառութեան ոգիով մը որ մինչեւ այսօր դեռ թարգմանիկ կուտայ իրեն՝ անգլիէրէնէ գփուարին հատուածներ,

երբ իր քննադատները շատոնց լուած են արգէն: Լաֆօնթէնի «Առաքիններ»ուն թարգմանիչը այդչափ առաջ չի գնաց իր կրիստոսին հանդէսը:

Գր. Մալխաս կը պատկանի այն քննադատներու դպրոցին, որոնք որոշ համոզում և հաստատ հաւատք ունենալնէն ետքը միայն, թէ իրենց ձեռքը դանուած երկասիրութիւնը կամ թարգմանութիւնը թերութիւններով լեցուն է, գրիչ կը շարժեն: Երբեք գովող մը չէ եղած, ու ասոր համար քիչ անգամ գովուած է: «Խաթեր համար» գիրքի մը վրայ բան մը գրելու տկարութիւնը գոյութիւն չունի իրեն համար: Քիչ բարեկամ կը հաշուէ լրագրութեան մէջ, որովհետեւ զիրաւ հաղորդ չէ իր բնաւորութիւնը. զինքը մօտէն ճանչցողները ասիկայ կը վերագրեն իր ծայրայեղ անկեղծութեանը: Եւ չեն սխալիր:

Լաւ Ֆրանսերէն կը գրէ, տնտեսական նիւթերու վրայ մանաւանդ, և իր այդ գրութեանքները կարգացող մը, կամ զինքը իր պաշտօնավարած եւրոպական վարչութեան գրասեղաններուն առջեւ նստած տեսնող մը, դժուարաւ պիտի հաւտար թէ հայերէն լեզուի նըքութիւններն ու մատենախօսական վէճեր այնքան մեղան սպառել տուած են այդ օտարականի երեւոյթով երիտասարդին:

Գրականութեան մէջ իր ճաշակներն աւելի անգլիական ու ֆրանսական են, իր ուժին պէս, որ վերջերս աւելի առաջինին կողմը ծանրացաւ, կարճ, հատու, երբեմն մինչև իսկ դժուարաւ թափանցելի:

Գպրոցի գրասեղաններուն վրայէն գրող մը ըլլալու պատրաստութեանը չէ, մեր այսօրուան գրագէտներէն ու հրատարակագիրներէն մեծագոյն ժափին պէս: Այդ հակումը չառ ուշ արթնցած է իր մէջ. նախ Պանքայի պաշտօնեան կաղմաւորուած է. յետոյ՝ գրչի մարդը:

Լրագրական ու գրական ամէն հարցերու կը հետեւի լրագրապետէ մը ու արուեստով գրագէտէ մը աւելի՝ հետաքրքրութեամբ: Ի՛նչ պղտիկ պարագան կամ մանրամասնութիւնը չի վրիպիր իր գրողի աչքէն ու կը տեղաւորուի յիշողութեանը մէջ, տարիներ

ետքը երեւան հանուելու համար, եթէ առիթը ներկայանայ:

Երբ թերթի մը աշխատակցի, սրտանց կը փարի անոր, առանց որ և է ետափրական նպատակի, անոր զարգացումին ու յառաջդիմութեանը փափագելով: Իր բարեկամութիւններն ալ իր խղովներուն պէս երկդիմութիւն չունին, — առաքինութիւն մը որ հաղուագիւտ կը դառնայ հետզհետէ մեր գրական հրատարակին վրայ և կարգ մը յեղձեղուն կ'ըրիչներու քով:

ԳԱՄԻՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԳԱԻԱՌԻ ԿԱԵՆՔԷ

Ա. Յ. Ի. Ն.

Ա.

Հոն, անկիւնը պարտէզին — տունին ետեւը — ոտաթխտ ուռենիի մը շուքը առանձնասենեակ մը կազմած էր: Տախտակէ դահաւորակ մը՝ որուն վրայ պարզ անկողին մը փռուած էր ճերմակ սաւաններով, ուռենիին գէս ի գետին խոնարհած անհամար ճիւղերով շրջապատուած՝ երկրային դրախտի մը նմանութիւնը կուտար հանգրուանին: Կիրակի առտու, մութնուլուսուն, կին մը ցատկելով անկողնէն շուտով հագուած, ու առուին մէջէն հոսող վճիռ ջուրով լուալով երեսները, գէս ի տուն կը յառաջանար: Անունը Արուսեակ էր: Երսունըջոր տարեկան, սեւ աչուի սև ընքուի, ճերմակ գեղեցիկ դեղջկուհի մը: Կը բնակէր Ք. Ղիւղը: Ունէր երկու աղջիկ երկու մանչ, Զարուհի, Գրիգոր, Շուշան Յակոբիկ: Անդրանիկը, տասնըութ տարուան, նշանուած Սալօ քէհեային սղուն, ու Գրիգոր՝ անոր պղտիկը՝ տասնըեկ, դեռ նոր լուծքի կ'երթար: Շուշանիկ տասներեքին մէջն էր ու Յակոբիկ հազիւ հինգ տարուան: Ամէնքն ալ ծնողական խնամքի կարօտ ու ամէնքն ալ սիրուն:

Արուսեակին էրիկը Գաբրիէլ, ժիր հողագործ մը, վեց ամիս կար որ մեռած էր, թողլով իր կնկանը վրայ զաւակներուն ապ-

բուստը՝ որ մեծ բան մը չէր, քանի որ ջրար-
բի արտեր և երկու ջուկստ լուծք ունէր, կո-
վերէն և ոչխարներէն զատ՝ որոնք ուրիշի
մը հօտին խառնուած էին: Արուսեակ՝ իր
չնորհալի բնաւորութեամբը և ճարպիկ վար-
ուելակերպովը գործը գլուխ կը հանէր: Որով-
հետեւ Գրիգոր դեռ պղտիկ էր, քովը բռնած
էր աղդակներէն ազապ մը, թորոսը,
աղքատիկ ծնողքի զաւակ—երեսուն տար-
ուան ժիր երիտասարդ մը՝ քիչ մը միամիտ:

Գեղին մէջ՝ ուր լրագրի պաշտօնը կը
վարեն կիները, միշտ կը խօսէին Արուսեակին
վրայ որ անուշ լեզու ըլլալով իր վրայ կը
հրաւիրէր ամէնուն ակնարկը: Չար նախանձը
մեծ աւերներ կը գործէր կիներուն մէջ, երբ
կը տեսնէին թէ իրենց էրկիններուն բերնէն
չէր լինար ան, ու չապշուած գովեստները
տարբեր ակնարկութիւններով ծեփելով ծեփ-
ծրփելով՝ խեղճը անձնամատոյց կ'ուշ մը կարգը
կ'իջեցնէին: Բերնէ բերան սուտերը ծափմը-
ուելով ճշմարտութեան կերպարանք կ'առ-
նէին: Արուսեակ բռնած էր խնամին ու իր
տան վերաբերող բոլոր գործերը անոր ձեռ-
քով կը տեսցնէր որպէս զի հանգիստ և ա-
նաղարտ կեանք մը ունենար: Խաչօ քէհեան
որ ամէն դալուն կը մեծարուէր կարագով
սերով ու մանաւանդ հարսնոյուն ձեռքի
համբոյրներովը, կը պաշտպանէր զայն ամէն
բանաստանքի դէմ և իր անձնութեանը
փոխարէն բան մը կը յուսար այրիէն ու
բուն սրտին բաբախումը ա'լ աւելի կը սաստ-
կանար:

Եւ սակայն Արուսեակ գործը գիտէր, ինչ
որ ալ ըսէր գեղացին, ու որչափ ալ ինքը
բամբասուէր նախանձոտ կիներէն, զիւրաւ
անձնատուր եղող կին մը չէր պէտքացողնե-
րուն առջեւ: Ատի՛լա տեղի կ'ունենար թէ
քէհեակին եւ թէ անոր նման մակաբոյծ
վաթկածներու կողմէն՝ որոնց այնքա՛ն ճար-
պիկութեամբ ու լեզուամբարտութեամբ կը պա-
տասխանէր և յոյսերնին պարաս կանել կու-
տար որ խեղճերը կը մնային հոն՝ չըթունք-
նին կախ՝ չիկնած ու ապշահար:

Շուտով պիտի մերժէր ու խզէր ամէն
կապ, բայց ի՞նչ ընէր, եթէ կոչաւ կերպով

վարուէր՝ ինք պիտի տուժէր անպատճառ իր
անտէր վիճակին մէջ: Մէյ մը որ Գրիգորը
քսանը անցունէր, ա'լ փոյթ չպիտի ըլլար: Եթէ
քիչ մը զըջում ցոյց տար, վերջը պիտի առ-
նուէր ու բոլորովին վարկադուրկ պիտի ըլ-
լար, մանաւանդ չարակեղու կարգ մը պա-
ռաւներու բերնին ծամոյցը պիտի դառնար,
ինք որ մինչեւ ան ատեն անարատ մնացած
էր հակառակ շատ մը սուտ ու փուտ վար-
կածներու:

Գեղին մէջ՝ ուր ասորուստը մեծ դժուա-
րութեան չէր բաղխեր, լուծքի հօտի եւայլն
գործերով դաշտերը չելլող աս յիսուննոց
վաթկածներուն համար ժամանց պէտք էր:
Շատ անգամ չբաւականանալով իրենց թա-
ռամած կիներէն, որսի կ'ելլէին սմբած սըմ-
քած և հոս հոն դեգերելով բաց դուռ կը
վնտռէին: Մեծ բարեբախտութիւն մըն էր,
երբոր Արուսեակին քով մտնէին, ու, պահ
մը, չէ թէ ուրիշ բան, այլ գէթ անուշ լե-
զուին ու թարմ հասակին հմայքոտ հրապոյր-
ները ըմբոյլանէին, պատրուակելով նշանաւոր
մը Շուշանիկին որ դեռ հաղիւ տասնըփորին
կը կոխէր: Եթէ տար՝ շուտով պիտի առնէին
որպէս զի կարենային ազատ մուտք ունենալ
տունէն ներս:

Բ.

Դարուն է, ասորիլի գեղալուարճ իրիկուն
մը: Տղան ու աղայը լուծքէն դարձած ու
կերակուրը ուտելէն ետքը ամէնքը իրենց
տեղերը պառկած էին: Արուսեակ չկրցաւ
քնանալ ու ելլելով անկողնին մէջ նստած կը
խորհէր իր դառն վիճակին վրայ: Դրան առ-
ջեւ չուէկ մը լսեց ու սառսաւ: Պահ մը
չունչը բռնեց համկնալու համար թէ հո՞վն է
թէ չունը և կամ ուրիշ անակնկալ մը: Խեղ-
ճը իր տնական գործերէն զատ՝ որոնց հոգը
բաւական էր իրեն, գեղացիին լեզուին սը-
լաքները ու այդ մակաբոյծներուն պահանջ-
ներուն հոգն ալ ծանրացած կը զգար արդէն իր
սգաւոր սիրտին վրայ: Օր մը մէկը, օր մը
միւսը, ամէնուն ալ յարմար պատասխանը
տալու էր:

Դուռը բանալու ճիգ մը կար: Եթէ ձայ-
նէր, տղաքը պիտի արթննային ու զգային

եղեղութիւնը, չձայնէր, դուռը պիտի բացուէր անմիջապէս, որովհետեւ առաջուրնէ հտեւէն աղխուած չէր խնամով: Յիշեց ցորեկուռն միջադէպը: Ժառանգական փոխանցման խնդիր մը մտատանջութիւն կը պատճառէր իրեն և խելահաս մէկու մը կը կարօտէր: Ստեփան, գեղին աղբեղիկներէն մէկը, եկած ու ըսած էր թէ զինքը շատ դիւրին ճամբէ մը անցընել կուտայ եթէ...: Աչքի քթթում մը, անուշիկ ակնարկ մը, բաւական եղած էին գործը կարգադրել տալու: Խնամին, Խաչօ քէհեա, առանց ցորեկուռն անցողաբաձէն տեղեկութիւն ունենալու, Արուսեակը չնորհաւորած էր: Խնդիրը փակուած ու ամէն բան մոռցուած էր: Չէր կարծեր թէ այդ մարդը իրիկունը պիտի գար ու դուռը ձեռք առնէր:

Սիրտը այս տակնուվրայութեան մէջ, ինչ ընելիքը երբ կը խորհէր, անդին խապոտ ձայն մը անունը տուաւ դողունի: — «Կուգամ կա» ըսաւ ու ցատկելով անկողնէն, ճրագը վառեց եւ մարդը ներս առաւ: Արդէն էն թարին հագած, գօտին կապած ու լաջակն ալ դրած էր: Դուռը բացաւ, բարձր ձայնով հրամցուց ու բազմոց մը ձգելով նստեցուց ընդարձակ սենեակին մէկ անկիւնը, հեռու անկողիններէն:

— Շնորհակալ եմ, աղա, ըսաւ համարձակ, այս օրուան խայրին համար. իրաւ որ բերս քեզի որքան պիտի աղօթեն. երբ ըսի իրենց՝ շատ ուրախացան: Ե՛լ, Ջարուհի, քէհեային համար պահուած իրիկուան տալալը քիչ մը մածոնով բեր որ ափիյէթ ընէ:

Ջարուհի, Խաչոյին հարսնցուն, որ այս աղմուկին վրայ արթնցած էր ու եկած հագուած, հարսնցու աղջկան մը պարկեշտութեամբ և ամօթխածութեամբ վաղեց անմիջապէս անպարը ու հրամանին համեմատ սեղանը պատրաստելով քէհեային առջեւը դրաւ, ձեռքը համբուրելով միանգամայն:

Այս պահուն Գրիգոր արթնցած ու աչքերը շփելով եկած նստած էր, երեսը կախ ու խոփոտ խոփոտ նայելով Ստեփանին:

Մարդուն աչքերէն կրակ կը ցայտէր: Ի՞նչ նպատակով եկած էր ու խնդիրը ո՛ւր կը յանգէր. բարկութենէն դողալով քիթին տա-

կէն քանի մը անլծորդ խօսքեր արտաբերեց և երբ տեսաւ Գրիգորին երեսը, մեղմանալով սկսաւ ինքզինքը դողել ու նոյն օրուան ըրածները պատմել: Երբ սեղանը լնցաւ, հասկցաւ որ կացութիւնը քիչ մը պաղ ու մանաւանդ վտանգաւոր էր աղուն արթննալովը, ամօթահար ու սմբած՝ հաղիւ տունէն դուրս ինկաւ:

Գ.

Արուսեակը հրեշտակ մը ներկայացնել չեմ ուզեր: Ան ալ ունէր իր անձկութիւնները ու իր սիրտնեղութիւնները: Աղջիկը փղը պառկած ու ինքը դարձեալ անկողին մէջ նստած էր մտայոյզ: Կը մտածէր թէ ո՛ւր պիտի յանգէր ասոր վախճանը: Գօտին արձկելով երբ կը հանէր հեքաւին, ասեղնագործուած նկարէն հաստ կտաւէ չալիկին տակէն դուրս կ'իյնային դեռ թարմ ու լեցուն կուրծքերը որ չորս զաւակներ մտեցած ըլլալով դեռ չորսի ալ պիտի բաւէին: Էրկանը մահը իրաւ հարուած մըն էր իրեն համար: Երբ միտքը բերէր էրկանը ողջութիւնը ու այն վայելքները զորս ամուսնական յարկը միայն կրնայ պարգեւել, կը փղձկէր ու յորդ արցունք մը կուգար ու դողել վարդազոյն այտերը, ա՛լ աւելի շատցնելով իր հրապոյրները:

Եթէ կարգուիլ ուզէր, թեկնածունք անպակաս էին, բայց ո՞րո՞ւ պիտի թողուր զաւակները ու տունը որուն համար ամբողջ տասնըհինգ տարիներ զոհած էր ինքզինքը ու այս բարեկեցիկ վիճակին հասուցած: Անշուշտ այրի մը պիտի առնէր եւ ուրիշին զաւակներով պիտի չըջապատուէր, թողլով իրենները անմայր, անոնք՝ որ արդէն մնացած էին անհայր: Մանաւանդ որ էրկանը մեռնելովը գործը եւ մնացած չէր. դարձեալ կը շարունակուէր միեւնոյն վիճակին մէջ:

Ջղաձգութիւն մը կուսնար ամէն անգամ որ միտքը իյնար էրիկը: Մերթ կասկարմիր և մերթ ձեփձերմակ կ'ըլար: Անձկութիւններ կը յաջորդէին անձկութիւններու: Միմիայն առօրեայ զբաղումները որոնք ծանր էին քիչ մը կը մեղմէին իր ցաւերը ու կ'ամոքէին սրտին բարախոսմաները: Գործերը լնցածին պէս կ'իջնէր պարտեղը, դրան ետին, ու ցանկելով, տըն-

կելով, յարդարելով, ջրելով ժամերը կըսպան-
նէր:

Պարտէզը գեղեցիկ էր: Բոլորտիքը մըր-
գաւէտ ծառերով զարդարուած. քառա-
կուսիին չորս անկիւնները չորս ուռնիկներ
հանգրուան եղած էին աշխատաւոր մշակին:
Մէջտեղերը ածուներու բաժնուած, ամէն ա-
ծու իր բանջարեղէնը ունէր: Հոն՝ անկիւն-
ներէն մէկը որուն ուռնիկին իր ճիւղերը գե-
տին խոնարհելով կարծես առանձին սենեակ
մը յօրինած էր՝ փայտէ նստարան մը կար ո-
րուն մէկ ծայրը ծալուած էր անկողին մը
ուր կը պառկէր Թորոս, իրինկուները, սը-
տուղի եղանակին, գրեթէ երեք ամիս: Շատ
անգամ գործերը լմնցունելէն ետքը Արուսեակ
կերթար կ'ընկողմանէր հոն՝ մինչեւ որ Շուշա-
նիկ ու Յակոբիկ քովը դային բան մը ուզելու:

Չարուհին եկած հասած էր, նուրբ ու
գեղեցիկ գեղջկուհի մը որ նշանածը տեսնել
սկսելէն ի վեր ա'լ աւելի ուռնացած էր: Ան-
հոգ կեանք, սլարդ՝ բայց լաւ մոռնող, նշա-
նածի երջանիկ կեանք, իր գեղեցկութիւնը
աւելի շեշտած էին: Փեսան Ստեփանն ալ,
աղուոր աղամարդ մը, գործին տէր, գիտակ
հողադործ մը, կը յարգէր զոքանչը ու միշտ
կը խորհրդակցէր անոր հետ: Գրեւ կարդալ
գիտէր, տէրաէրի մը նման եկեղեցական ա-
րարողութիւնները սերտած էր ու քիչ շատ
ալ կարգացածը կը հասկնար: Աղագային
գեղին քէհեան, զիրքի տէր մէկը ըլլալու յատ-
կութիւններով օժտուած էր: Այս երկտասար-
դը հասկցած էր զոքանչին անտանելի վիճակը
ու շատ տեղեր ալ կռուած էր պառաւներու
հետ՝ անտեղի չարախօսութիւններնուն հա-
մար: Նոյն իսկ հօրը ալ քոտալն ալ զգացած էր.
կուղէր խօսք բանալ Արուսեակին, բայց չէր
համարձակեր որովհետեւ մօր մը սէս կը սի-
րէր զայն:

Արուսեակ գեղջուկ իգական սեռին մէջ
իրաւ հեղինակութիւն մըն էր: «Եթէ քիչ մը
կարդալ գրել գիտնայի, կ'ըսէր երբեմն փե-
սին, շատ խաղեր կը խաղայի սա՛ վաթկած»
ներուն որոնք չեն ամբնար իրենց կատարե-
լութեան հասակին մէջ աղարտելու կնոջ մը
անունը»:

Տղան ու փեսան բաւական պիտի ըլլային
իր երազները իրականացնելու, եթէ ինքն ալ
իր երեսունըչորս տարուան թարժ հասակին
մէջ չզգար տանջանքը այն հրայրքին որ կը
տողորէր իր սիրտը: Բնութիւնը աննուաճ վայր-
կեաններ ունի: Իր սիրտը բացած էր անդամ
մը երկանը ծուխը Տէրաէրին որուն իրիցկինը
շատոնց մեռած էր ու տեսած էր որ ա'ն ալ
թուլցած կնոջ խոստովանութեան՝ միւսնոյն
պահանջքը ըրած էր իրեն:—«Բեզի իրիցկին
կ'ըլլայի, տէրպապաս, եթէ հրաման տար
կաթողիկոսը: Բեզմէ ալ յոյս կարեցի: Կ'ա-
ղաչեմ, տէրպապաս, ասկէ ետքը արքայու-
թիւնդ ուրիշին ծախէ: Քու էլ խելապատակդ
չափեցի»:

(Բ. եւ վերջին մասը յաջորդ քիւով)

ՇԱՀԱՐԻՆ

ԱՆՊԱՐԶ ՍԵՐ



Պասկերդ ինչո՞ւ կը վարանի
Եթերին մեջ քանկ յուեհուս,
Դալուկն ունիս դուն աշունի,
Պասկերդ ինչո՞ւ կը վարանի ...:

Անունդ ինչո՞ւ դեղնի անյոյս,
Ինչո՞ւ ալ չես ցցուածքն հրգօր,
Չե՛ս դուն իմ մեջ երբ մեռնի յոյս...
Անունդ ինչո՞ւ դեղնի անյոյս:

Վերջալոյսի լինն է բոսոր
Ինչո՞ւ, ինչո՞ւ ա'լ չե՛ս տանջեր...
Անդարձ սիրոյ մեռած բեկո՛ւր,
Վերջալոյսի լինն է բոսոր,
Ինչո՞ւ, ինչո՞ւ այս ցուրտ լանջեր...:
Ե. Գ.

ՈՏԱՆԱԻՈՐԻ ՄՐՅՈՒՄԸ

Մասիսի բացած բանաստեղծական մըր-
ցումին ենթարկուելու համար զրկուած ոտա-
նաւորներուն քննութիւնը աւարտելու մօտ
է, եւ մեր յաջորդ երկու թիւերէն մէկուն
մէջ (թիւ 19 կամ թիւ 20) պիտի ծանուցա-
նենք արդիւնքը՝ հրատարակելով նաեւ մըր-
ցանակի արժանի դատուած ոտանաւորը:

ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Սինկեր Բնկերութեան Թուրքիոյ ճիւղին Բնդէ. Տնօրէն Պ. Ռօզէնշլաթն մասնաւոր հրաւեր մը ուղղած ըլլալով նաեւ Մասիսի Սմարաղբութեան, — ինչպէս տեղական մամուլի ուրիշ ներկայացուցիչներուն, — այցելել անոր մեքենական արտադրութեանց ցուցահանդէսը որ կազմակերպուած է Բերայի մէջ, մեր ընթերցողներուն և մանաւանդ ընթերցողուհիներուն համար շահեկանութենէ ու օգտակարութենէ զուրկ չենք համարիր՝ ամիսի կերպով ներկայացնել այդ այցելութեան տպաւորութիւնը: Սինկեր անունը մինչեւ հիմայ մեր աչքին կը պատկերացնէր կարի մեքենայ մը որ ձերմակեղէններու, շրջաղգեստի և կարգ մը հանդերձեղէններու պատրաստութիւնը միայն կը գիւրացնէ, սովորական դարձած եղանակով, ինչպէս վարժուած ենք տեսնել տուներու մէջ կամ դերձակներու խանութները: Ներկայ ցուցահանդէսը բոլորովին նոր ու հմայիչ ձևեր մը տակ երեւան բերաւ այդ մեքենաներուն գործուածքը, որ կատարելապէս կը յարմարի broderieի ճիւղին, ամէն պէսախտութիւններով:

Բնկերութեան արդի ընդարձակ շէնքին, — որուն գետնայարկը յատկացուած է վաճառատան, — մարմարեայ սանդուխներէն վեր ելլելով, միջին յարկի սրահին մէջ երկու կարգ սեղաններու վրայ պարզուած կը գտնենք «մեքենական ձեռագործ»ները, տանթէներ, ոսկեթել հիւսուածքներ, մետաքսեայ դոյնդգոյն բանուածքներ, ծաղկեկերպեր՝ բարձիկներու և թաշկինակներու վրայ և այլն, այնքան նրբութեամբ ու կատարելութեամբ պատրաստուած որ պահ մը մտածել կուտան թէ արդեօք մեքենականութիւնը գեր չունի՞ անոնց մէջ և ձեռքով չիսուած են: Իրերէ ոչ-մասնագէտ մը կանացի դործերու, չենք վարանիր մեր այս մտածումը անկեղծապէս յայտնելու մեր հիւրընկալին որ, դրականապէս պատասխանելու համար, կ'առաջնորդէ զմեզ յարակից սրահները ուր մանկամարդ աղջիկներ՝ գործասեղաններուն

առջեւ նստած՝ կ'աշխատին: Հոն, ամէն տարակոյս կը փարատի այլեւս, և կէս ժամէ աւելի դիտեցինք անոնց ձեռարուեստ աշխատութիւնը, Սինկերի մեքենաներով, զորս ճարտար ձեռքերով և ուշադիր աչքով կը վարեն, արտադրելով վերեւ յիշուած գործերը որոնց վրայ դժուար է ճշգրիտ գաղափար մը տալ դրիչով: Դասաւանդութիւնները եւ վարժութիւնները ճրի կը կատարուին՝ Բնկերութեան ուսուցչուհիներուն կողմէ, ի հարկէ անոնց միայն որոնք մեքենայի մը հէք եղած են կամ ըլլալ կը փափագին: Երկու ամսուան exercice մը կը բաւէ: Արդէն, բաւական ժամանակէ ի վեր կը կատարուին այդ դասախօսութիւնները՝ ամէն ազգի աշակերտուհիներու: Յուցադրուած առարկաները ուսուցչուհիներու ձեռքէն ելած են, եւ յայտնի կ'երեւար արդէն թէ նորալարմանը գործ չէին. մանաւանդ միջին սալօնի մը մէջ դըրուած նկարները, գունաւոր մետաքսով դործուած՝ միշտ Սինկերի մեքենաներուն միջոցաւ: Այդ նկարներէն մէկը կը ներկայացնէ ծովեզերեայ դղեակ մը, ծառաղաղք. ուրիշ մը՝ ծաղկիներու փունջ մը, երրորդ մը՝ դամբլը մը, և այլն: Ու ամէնուն մէջ ալ, գոյներու ճշգրտութիւն ու կենդանութիւն կայ՝ ճարտար վրձինէ մը ելած իւղաներկ պատկերներու պէս:

Մեր մէջ, մասնաւորապէս երկու դասակարգի ընտանիքներ կրնան հետաքրքրել այս մեքենական ձեռագործ արտադրութիւնները. ուսեւորները որոնք՝ իրեւ *amateur*՝ ժամանցի համար հաճոյք պիտի զգան սորվիլ և կատարել այդ աշխատութիւնը, իրենց սալօններուն մէջմէկ զարդ պատրաստելու համար. երկրորդ, միջակ դասակարգի այն ընտանիքները որոնց համար ապրուստի խնդիր մըն է անդնադործութիւնը: Պոլսոյ մէջ պղտիկ թիւ մը չեն կաղմեր այն հայ կիներն ու աղջիկները որոնք սիւզեհի, *սիվալ* եւ այլն կը բանին: Սինկերի ցուցադրած նորութիւնները այդ ճիւղերն ալ կ'ընդգրկեն և կրնան իրենց ընդհանրացմանը շնորհիւ, առեւտուրի աշխարհին մէջ զօրաւոր մրցում մը մղել ձեռագործներուն դէմ: Լաւ կ'ըլլայ

հիմակուց հետաքրքրուիլ, ճանչնալ զանոնք :
Պ. Ռօզէնշլայն հաճոյակատարութիւնը
ունեցաւ, մեր այս այցելութենէն ետքը, մաս-
նաւոր տեսակցութեան մը մէջ, բերանացի
բաւական ծանօթութիւններ հաղորդել—մեր
հետաքրքրութիւնը դռնացնելու համար—Սին-
կէրի գաւառային գործակալութեանց վրայ
որոնց վարիչներուն մէջ բաւական թիւով
Հայեր ալ կան :

Ուրիշ առթիւ մը վերապահելով քանի մը
նօթեր տալ այդ մասին, մեր այս հակիրճ
ազատութիւնը կը վերջացնենք մեր շնոր-
հաւորութիւնները յայտնելով Պ. Ռօզէնշլայ-
նի՝ որուն գործնական մտքին և իմաստուն
վարչութեան շնորհիւ Սինկէր ընկերութեան
գործերը յարաճուն ծաւալում մը կը գտնեն
Թուրքիոյ մէջ, ժողովրդեան զիւրամատչելի
ամէն պայմաններով : Ու շնորհակալութիւն
մը՝ Պ. Վռամ Քէնտիրեանի, Կեդր. Տնօրէ-
նութեան թարգմանը, որ հիւրամեծարի պաշ-
տօնը կը վարէ Յուդահանդէսի տեսչութեան
միջոցին և որ շատ սիրալիր կերպով ամէն
բացատրութիւններ տուաւ մեզ հետաքրքրող
կէտերու մասին :

* * *

Այս տողերը գրուած էին արդէն, երբ ի-
մացանք թէ Սինկէրի Տնօրէնութեան կողմէ
յատուկ պաշտօնականը գրկուելով Բերայի ար-
հեստանոցը, Էսթան վարժարանը և թաղա-
յին ուրիշ աղջկանց վարժարաններ, հրաւեր
եղած է որ ուսուցչուհիներն ու աշակերտու-
հիները այցելեն Յուդահանդէսը ու մօտէն
գլխուն մեքենական նրբահիւս ձեռագործները :
Նոյն Տնօրէնութեան կողմէ երկու գլխաւոր
պաշտօնականներ ալ չորեքշաբթի օրը Պատրի-
արքարան դացին և խնդրեցին Ս. Պատրիար-
քէն որ հաճի իր այցելութեամբ պատուել
Յուդահանդէսը և միանգամայն արածնել աղ-
ջկանց վարժարաններու աշակերտուհիները՝
երթալ տեսնելու իրենց հետեւած ձեռքերուն
վերաբերող աշխատութիւնները :

Բաւական թիւով հայ ընտանիքներ ու
աղջիկներ արդէն իսկ այցելած են Սինկէրի
Յուդահանդէսը որ բաց կը մնայ նաեւ յառա-
ջիկայ շաբթու :

AGNOSTIC . . . ԱՆԳԷՏ

Մէկը, ԳՆՈՍՏԻԿ ծածկանունին տակ, նո-
րէն առիթ կը գտնայ շաղակրատելու :

Մասիսի անցեալ թիւին մէջ գործածած
էի Գառնապուտ բառը՝ իբր թարգմանու-
թիւն, բայց շատ կասկածելի թարգմանու-
թիւն, agnostic անգլիերէն բառին : Կաս-
կածիս յայտնի ապացոյցն ալ է կրկին բացա-
ղանչութեան նշանը (!) զոր դրի : Չտեսա՞ր
Չհասկըցա՞ր :

Բայց դուք, տեսանիցէք, և մի՛ տեսիք :
Չեմ կարծեր որ Աստուածաբանութեան
մէջ փայլողներն հարթեցին մեր մէջ քննա-
դատութեան ճամբան : Եւ եթէ ԳՆՈՍՏԻԿ կը
յաւակնի ըլլալ վարդապետ մը աւելի calo-
tin, աւելի՛ լաւ իրեն համար, աւելի գէշ՝
քննադատութեան համար : Ես սխալ չնա-
խանձիմ իրեն transcendante փիլիսոփայու-
թեանը՝ որ մերը չէ : Մենք չենք հասկընար
ն'չ gnosticisme, ո'չ scolastique :

Ես մօլորեցայ agnus բառէն՝ որ է սլաուկեր
«ԳՍՈՆ Աստուծոյ», զոր սովորութիւն է
տողոց տալ իբր պարգև, արեւմուտքի մէջ :
Հասկըցա՞ր, ԳՆՈՍՏԻԿ, ըմբռնեցի՞ր, տե-
սա՞ր :

Քննադատութեան մէջ՝ մեր մեծ փիլիսո-
փայութիւնն է՝ անկեղծութիւնը, որով բա-
ցայայտ կը վիճինք, բացայայտ կը խոստո-
վանինք մեր սխալները :

Եւ անոնց՝ որ կը վերածեն քննադատու-
թիւնը աննշան նամակադրութիւններու, ա-
նոնց կ'ըսենք :

—Դիմախները վա՛ր :

ԳՐ. ՄԱԼԿԱՍ

1/14 Մայիս 1903

Յ. Գ.—Ծիծաղելին հոն է որ՝ այդ մար-
դը համարժէք կը գտնէ agnostic և Անգէտ
բառերը, կարծելով թէ a բացասական մաս-
նիկ է յունարէն կնոսիս արմատին վրայ : Եւ
ինք կ'ըլլայ ԳՆՈՍՏԻԿ՝ դադղիւրէն gnosti-
queին հետ, և ԱՆԳԷՏ՝ անգլիերէն agnos-
ticին հետ : Խորհեցէ՛ք, ուսումնասիրեցէ՛ք,
շատ կարգացէք եւ . . . ԲՆԱԽ մի գրէք :

Գ. Մ.

ՍԾԵՆՏԻ

Խողորմներու ընծիւղերուն
Գիշերոս, հոծ քաւութիւն մեզ
Բոյրի վարանքն յամիկներուն

Մուշկի խուցկն է վառներուդ մեզ :

Յողի շիբերն աղուոր այգուն
Մաղանոս տնավ քերքերուն տակ
Կապոյտնոցի հիւրիկներուն

Սիրոյ լացն է կոպերուդ տակ :

Իսկ քայքայուած քաղաքներուն
Լիլակներուն բոյիքն վրայ
Անճան քիթուն ալ մոյրուն

Իմին սեռս է սիրսիդ վրայ :
Գ . Ս .

ԽՐԱՄԱԳՐԱՅԱԼ ՆՕԹԵՐ

Գում-Գաբուի Աղքատախնամին ի նպաստ
կազմակերպուած թատերական ներկայացումը
որ տեղի ունեցաւ կիրակի ցորեկ, Բերայի
մէջ, Մնակեան թատերախումբին կողմէ, 100
ոսկրի մօտ հասոյթ արտադրած է : Այս նիւ-
թական գոհացուցիչ արդիւնքը ձեռք բեր-
ուած է որքան չնորհիւ այն ընդհանուր հա-
մակրանքին զոր կը վայելէ այդ մարդասի-
րական մարմինը՝ նոյնքան նաեւ այն անձնուէր
ջանքերուն և աշխատութեան չնորհիւ զորս
նուիրեցին Կարգադիր Մասնախումբի ան-
դամներէն Տեառք Յարութիւն Սիմոնեան,
Արմենակ Փափաղեան, Տիրան Մելիքեան և
Խաչիկ Թաշճեան, օրինակելի կանոնաւորու-
թեամբ և եռանդով :

Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ
նկատելով որ Ռուսմանտոյ հայ ժողովուրդը
երկար ատենէ ի վեր անխնամ կը մնայ հո-
գեւորացէս և այդ առաջնորդական վիճակը
կազմակերպուելու անհրաժեշտ պէտք ունի,
հարկ դատեց կալիպոպոս Տը զրկել որուն
անուանումը պիտի կատարուի յաջորդ նիս-
տին մէջ :

Բարիքն Յուշատեցիք. — Այրի Տիկին Էլիզ
Շ . Նազաշճեան՝ իր հանդուցեալ ամուսնոյն
յիշատակին՝ 150 ոսկի նուիրած է Ս . Փրկչի
Հիւանդանոցին, այդ հաստատութեան կա-

րեւոր մէկ մասին շինութեան յատկացուելու
համար : — ԼՈՒԻՍԱՆ ապահովագր. ընկերութեան
Տնօրէն Սիմօն Էֆ . Գայտէրլեանի գրասենեակը
դռնուած առտնին դանձանակին այս անգամ
ուան հասոյթը եղած է 23 ոսկի : Գայտէրլեան
Էֆ ., ինչպէս յայտնի է, Հիւանդանոցի այս
դանձանակներուն հաստատութեան օրէն մաս-
նաւոր հոգածութիւն մը ցոյց տուաւ անոնց
արդիւնաւորմանը մասին և տարուէ տարի
բաւական կարեւոր դուժար մը կը գոյացնէ :

Երուսաղէմի Ս . Պատրիարքը աղաման-
դազարդ լանջախաչ մը նուիրեր է Յոսպէի
սեւուշ Տ . Մատթէոս Վրդ . Գայրճեանին,
մասնաւորապէս գնահատելով անոր անձնուէր
ջանքերը՝ Յոսպէի մէջ վերջերս տիրած հա-
մաճարակին առթիւ առողջապահական մի-
ջոցներու գործադրութեան մասին : Տ . Մատ-
թէոս վարդապետ, երբեմն համարակալ երու-
սաղէմի վանքին, յետոյ տեսուչ Պէրուժի,
Ս . Յակոբեանց Միաբանութեան կարող և
եռանդուն անդամներէն է որ արժանա-
ւորապէս կը պաշտօնավարէ այժմ Յոսպէի
մէջ :

ԳԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՅՈՐՈՒՄԱՆ

Տէր

Առաջիկայ մայիս ամսոյ 4/17ին, Վանա-
տանս անդամներէն Գեր . Հ . Եղիշէ Վ . Գաֆ-
թանեան Բահանայութեան 50 տարւոյ Յո-
բելեանը պիտի կատարէ : Գեր . Վարդապետը
նոյն օրն առտու՝ ըստ Եւրոպ . Ժամը 9ին,
Բանկալթի, Վիեննայի Միթիթարեան Հարց
Անարատ Յըութիւն եկեղեցին հանդիսական
Ս . Պատարագ պիտի մատուցանէ :

Ս . Պատարագէն ետքը Հանդիսակիցը
Վանատան մէջ իրենց բարեմաղթութիւնները
պիտի ընեն Գեր . Յորեկեար վարդապետին :
Կը հրաւիրենք Ձեր Յարգութիւնը, որ
հաճիք մասնակցիլ սոյն ուրախական հանդի-
սին :

ՎԱՆԱՏՈՒՆ ՀԱՐՅ ՄԵԻԹԱՐԵԱՆՅ

ՎԻԵՆՆԱՅ

Բանկալթի, Ապրիլ 28/11 մայիս 1903

Արսոնաք Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՑ Օրագրի

HOTEL «FERAH» ՕԹԷԼ «ՖԵՐԱՀ»,

Բրինքիրօ, Նիզամի պողոտային վրայ,
ծովահայեաց, ընդարձակ պարտեզներու մէջ:
Վարձակալը, Առաքել Տերեկեան որ այնքան
ինտուք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի
հանրածանօթ նախկին Գասպար ճաշարանը,
յանձն առած է նիւթական ամէն զոհողու-
թիւններ ընել՝ իր բաղմամբիւ յաճատորդնե-
րուն հանգստութեանը համար:

Դիները չափաւոր. լաւ և մաքուր սնունդ.
պանդոկը բաց է Եւրոպական մայիս մէկէն
սկսեալ:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻՒՆԻՕՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
գրասենեակները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ նորաշէն. Բաթըրճի Օղլու
Բասափը:



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուշաֆէրիէ Հիւանդանոցին և
Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, բիւ 61
Զրաւեան աբաղքման

Պալպալեան ամէն օր ակռայի ամէն տե-
սակ հիւանդութիւններով տառապողները
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխատորէ իր լեցուցած ու չինած ակռա-
ները: Յորեկները ակռայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կախեալ է:

Աղփասներուն ճի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828 - 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՞ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրողը ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց
կ'ենթարկուին միայն այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation
des bénéfices) ՅՅՈՒ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասափ Բաթըրճի Օղլու

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ